# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 փետրվարի 2024 թվականի № 60-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՐԶՆԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2023 թվականի նոյեմբերի 30-ի № 400-Ա որոշումն՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել ***2024 թվականի փետրվարի 9-ին ժամը 11:00-ին*** Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արզնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթն անցկացնող մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

1) ***Հայկ Մկրտչյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ,

2) ***Անուշ Ղահրամանյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ,

3) ***Վահագն Նազլոյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ,

4) ***Նորա Փահլևանյան*** - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության արտահիվանդանոցային բժշկական օգնության քաղաքականության բաժնի պետ,

5) ***Գրիգորիս Օլոյան*** - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության «Կոտայք» մասնաճյուղի տնօրեն,

6) ***Մարգարիտա Մարգարյան*** - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ,

7) ***Արտակ Գրիգորյան*** - Հայկական հոգեբուժական ասոցիացիայի անդամ:

2. Հանձնաժողովի նախագահ նշանակել *Հայկ Մկրտչյանին*, քարտուղար՝ *Վահագն Նազլոյանին*:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2024 թվականի փետրվարի 8**
**ք. Հրազդան**